ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

Ա.

Տաճերի գիւտի 1500-ամեակի եւ տպագրութեան 400-ամեակի յոբելեանական տօնները Թիֆլիսում։

Իբրեւ Կովկասի հայ մտաւորականութեան կենտրոն, Թիֆլիսում եւս հայ մտքի և գրի այս Մեծ Տօնը տօնուեց վայելուչ կերպով։ Վաղուց ուղարկուած էին Թեմիս առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի յատուկ շրջաբերականները քաղաքիս թէ հասարակական հիմնարկութիւններին և թէ դպրոցական հաստատութիւններին, որով հրաւիրում էր անմասն չը մնալ Թիֆլիսում կատարուելիք Մեծ Տօնին նուիրուած հանդէսներին, որոնք տեղի էին ունենալու հոկտեմբեր 11—12 և 13-ի օրերին։ Հոկտեմբերի 11-ին դպրոցական հաստատութիւնները իրենց դասադադարով աղդանշան տուին տօների սկզբնաւորութեան. այդ օրը երեք դաս պատրաստելուց յետոյ ուսուցիչները բացատրեցին աշակերտութեանը Մեծ Տօնի նշանակութիւնը։

Հայ Դրամատիկական Ընկերութիւնը կազմակերպել էր աշակերտական ձրի ներկայացում. խաղալու էին «Սահակ և Մեսրոպ» պիէսան, որը յատուկ պատրաստուած էր տօնի առթիւ. աշակերտութիւնը իրենց ուսուցիչների առաջնորդութեամբ շարանշարան շտապում էին դէպի Արտիստիկ թատրոնը։ Ընդարձակ սրահը ծայր է ի ծայր լցուած էր հայ միջնակարգ և ծխական դպրոցների սաներով։ Պատմական պիէսայի տպաւորութիւնը, ուր հանդէս էին եկած ս. Սահակն ու Մեսրոպը տաճերի գիւտի պատմութեամբ բաւականին ուժեղ էր և մեծ ոգևորութեան առաջքերեց մանուկ հանդիսականների մէջ։

Հոկտեմբերի 12-ին Թարգմանչաց տօնի օրն էր. Վանքի մայր եկեղեցում կատարուեց պատարագ և հոգեհանգիստ հայ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին։ Առաւօտեան ժամը

11-ից քաղաքում սկսեցին փակել հայ վանական-ական հիմնարկութիւնները տօնի առթիւ միաժամանակ հայ կրթական հասատութիւններից՝ աշակերտներն ու աշակերտուհիները իրենց հոգեբարձական և ուսուցչական կազմերով սկսեցին հաւաքուել Վանքի գաւթում. գաւթի թէ մուտքը և թէ առաջնորդարանը ու Ղուկասեան թանգարանը զարդարուած էին դրօշակներով։

Վերջացաւ ժամերգութիւնը և եկեղեցու գաւթում հոգևորական դասի և աղօթողների հետ կատարուեց հոգեհանգիստ Մեծ ուսուցիչների և վաստակաւորների անմահ յիշատակին։

Հոկտեմբերի 13-ին, համաձայն նախապէս սահմանուած ծրագրի Վանքի մայր եկեղեցում տեղի ունեցաւ հանդիսաւոր պատարագ. պատարագիչն էր թեմական առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը. եկեղեցում ասեղ գցելու տեղ չկար, իսկ գաւիթը լցուած էր հազարաւոր ամբոխով։ Պատարագի միջոցին օրւայ Մեծ Տօնի պատշաճ գեղեցիկ ճառ խօսեց Բենիկ վարդապետը համեմատութեան դնելով V դարի ոսկեդենիկ գրականութիւնը, հայ անուշիկ լեզուն՝ ներկայ գրականութեան հետ։ Պատարագը վերջանալուց յետոյ պատարագիչ եպիսկոպոսը հոգևորական դասի մասնակցութեամբ հայրապետական մաղթանք կատարեց։ Մաղթանքից յետոյ եկեղեցական թափորը ուղևորուեց դէպի Ներսիսեան դպրոցի նոր շէնքը։ Այստեղ ամբոխի հոծ բազմութիւնը հաւաքուած էր տեսնելու հայ կուլտուրայի վերածնութեան տօնահանդէսը։ Շէնքի մուտքի առաջ կանգ առաւ թափորը և սրբազան առաջնորդը դրսում հաւաքուած բազմութեանը մի քանի խօսքով բացատրեց տօնի մեծ նշանակութիւնը և օրհնեց նրանց։ Փառահեղ էր թափորի մուտքը դէպի դպրոցի հոյակապ սրահը, ուր ծայրէ ի ծայր լցուած հիւրերն և հանդիսականները անհամբեր սպասում էին հանդիսի բացման։ Սրբազան առաջնորդի ատենախօսութեամբ և Կայսերական «հիմն»-ով բացուեց հանդէսը։

Պետական, հասարակական և դպրոցական հիմնարկութիւնների ներկայացուցիչների և պատգամաւորների ճառերը, ուղերձներն ու շնորհաւորանքները, որ տեղի ունեցաւ հանդիսի ընթացքում շեշտում էին այն մեծ նշանակութիւնը, որ ունեցել է հայ գրի ու տպագրութեան գործը հայ կեանքում։ Հանդէսը, որին Ներսիսեան, Յովհաննեան և Փայլանեան դպրոցների երդեցիկ խմբերը իրենց մասնակցութեամբ որոշ փայլ տուին. վերջացաւ ժամը 5-ին և ժողովուրդը տօնական ուրախ տրամադրութեան տակ ցրուեց իրենց տները։

Ներսիսեան դպրոցի այս մեծ հանդէսից յետոյ միւս հայ դպրոցներն ևս իրենց շրջանակի մէջ—երևան եկան առանձին ար-

տայությամբ, Ներսիսեան, Յովհաննեան, Նորաշէնի ս. Մարիամեան, Կուկիոյ Նորաշէն դպրոցներն ևս կազմակերպեցին յատուկ երեկոյթ ցերեկոյթներ, ուր բացի Մեծ Տօնի նշանակութեանը վերաբերող արտասանութիւններից ու երգերից աշակերտական ուրախ և բազմատեսակ ժամանց տեղի ունեցաւ. մի շարք դպրոցներ ևս ինչպէս Գայեանեան, Թանդոյեան և այլ դպրոցներ Մեծ Տօնը վայելուչ շուքով տօնելու պատրաստութիւնների մէջ են։

Յոբելեանական տօնի առթիւ Ուս. Միութեան վարչութիւնը ևս որոշել է կազմակերպել ցերեկոյթ աշակերտական ճոխ և բազմաբովանդակ ծրագրով, ուր հանդէս են գալու մի քանի հայ դպրոցների երեխաներ առանձին պատրաստութեամբ։

Ազաս

Բ.

Համազգային յոբելեանական հանդէսները զատառում։

Ազգերի պատմութեան մէջ հազուադէպ են այնպիսի մեծ տարեդարձներ, յոբելեաններ, ինչպիսին կատարեց ամբողջ հայ ժողովուրդը այս տարուայ հոկտեմբերի 13-ին։ Կուլտուրական տօներից մեծագոյնները՝ առոնքի գիւտի 1500-ամեակը և տպագրութեան 400-ամեակն էր, որ այնպէս առանձին ցնծութեամբ ու մեծ հանդիսաւորութեամբ տօնուեց համարեա ամենուրէք, ուր հայկական մի փոքրիկ խմբակցութիւն գոյութիւն ունէր։ Հայ ժողովուրդն իր այդ խանդավառ ու գիտակցական վերաբերմունքով եկաւ իր խօսքն ասելու համաշխարհային քաղաքակրթութեան առաջ, եկաւ մի անգամ ևս կրկնելու բազմիցս շեշտած այն ճշմարիտ խօսքերը, թէ հայը իրաւունք ունի տեղ գրաւելու քաղաքակիրթ ազգերի շարքում, քանի որ 1500-ամեայ գրական անցեալ ունի և քանի որ Գուտտենբերգի մեծ գիւտից շատ չանցած կարողացել է ստեղծել հայ տպագրութիւն հարստացնելու և ժո-

ղովրդի շատ խաւերի սեփականութիւն դարձնելու հայ գիրն ու գրականութիւնը։

Հայ կեանքն ունեցել է յաճախ այնպիսի ծանր ժամանակաշրջաններ, երբ ամեն ինչ կորած է համարուել և սակայն շնորհիւ մի շարք տոկուն անձանց անձնազոհ աշխատանքների, հայ գիրը և գրականութիւնը, հազուագիւտ և թանկարժէք պատմական մեծ նշանակութիւն ունեցող շատ մատեաններ կարողացել են մնալ անկորուստ։ Եւ եթէ այսօր մենք մեր պատմութիւնն ունենք, այդ շնորհիւ եղակի անձանց անխոնջ աշխատութեան, որ կարողացան Հայաստանի թշուառ կացութեան ժամանակ, աներկիւղ կերպով, ամենայն տեսակ վտանգի և զրկանքի ենթարկելով իրենց անձը, գրի առնել հայ կեանքի որոշ ժամանակաշրջանների պատմութիւնները և մեզ շնորհել իբրև ժառանգութիւն։ Համեստ գործիչների ստեղծագործական աշխատանքները միջոց տուին դասելու հային պատմական և կուլտուրական աղբերի շարքը, իսկ այդ գործիչների և մեր ամենից մեծ ուսուցիչ և ստեղծագործող Մեսրոպը իր հրաշագործ գիւտի՝ տառերի շնորհիւ կարողացաւ պահպանել հայ ժողովրդին կորստեան վտանգից և ապահովել նրա գոյութիւնը։ Մեսրոպի կատարած գործի մեծութիւնն էր, որ հոկտեմբերի 13-ին կարողացաւ հայութեան բոլոր խաւերին իր շուրջը հաւաքել. ու այնպէս մեծաշուք հանդիսաւորութիւն տալ յիշատակութեան յաւէտ արժանի ստեղծագործութեան յոբելեանական օրուան, ազգային տօնին։

Իւրաքանչիւր ժողովրդի կեանքի համար համազգային նման տօները կուլտուրական մեծ նշանակութիւն ունեն։ Այն խանդավառ վերաբերմունքը, որ ցոյց տուեց հայութիւնն ամենուրէք, արդիւնաւոր եղաւ նաև այդ տօնն յաւերժացնելու համար հիմնած գպրոցական ֆոնդի նկատմամբ։ Թէպէտ և Էջմիածնի անտակտ և անհեռատես վերաբերմունքի շնորհիւ բաւականաչափ տուժեց ինչպէս տօնի շքեղութիւնը և իսկական համազգային լինելը, նոյնպէս և ֆոնդը, այնուամենայնիւ իր լեզուն, իր պատմութիւնը, հայ գիրքը սիրող ժողովուրդը կարողացաւ այդ պատասխանատու գործից բաւականաչափ պատուաւոր կերպով դուրս գալ, երևան հանելով այդ օրը իր ամենանուիրական զգացմունքները։ Տօնը, այո, համազգային էր. այդ օրը չը կար դասակարգային կուսակցական դաւանանքների խտրութիւն, քանի որ հայ գիրը, գիրքը ամենքի սեփականութիւնն է։ Ազգային այս մեծ տօնը եկաւ ասելու, որ կան մոմենտներ, երբ ամենքս միմեանց նկատմամբ զգում ենք եղբայրներ։

Սակայն Ռուսաստանի բոլոր հայաշատ վայրերի ներքին վե-

բաբերմունքի գնահատումը իսկապէս դժուար է այժմ տալ։ Ամ այժմ մեզ համար հնարաւոր է մի ընդհանուր և ամփոփ հաղիւ տալ յոբելեանական հանդէսների մասին։

Թիֆլիսը, շնորհիւ կարող ինտելիգենտ ոյժերի, գրական, հրապարակախօսութեան, համեմատաբար աւելի ուժգին կերպով կարող էր հրապարակ նետուել. այստեղ մեզ համար ուշադրութեան արժանին գաւառներն և գաղութներ են, ուր զետեղուած են ռուսահայերի ստուար և համեմատաբար աւելի թարմ մասը, որի ցոյց տուած վերաբերմունքի աստիճանը հանդէպ համազգային մեծ տօնի, անշուշտ աւելի քան կարևոր է։ Հանդէսների այս կամ այն կերպ կատարելը, ճշմարիտ է, աւելի սրտագին կուլտուրական նշանակութիւն ունի, սակայն որոշ գաղափար է տալիս ժողովրդի գիտակցութեան, ազգային զգացմունքի մասին։ Ահա այդ գիտակցութեան աստիճանը բնորոշելու համար է, որ կարևոր ենք համարում մի հայեացք գցել Կովկասահայ գաւառներում կատարուած հանդէսների վրայ, քաղելով մեր տեղեկութիւնները թերթերում այդ առթիւ լոյս տեսած թղթակցութիւններից։

Կովկասահայութեան ամենաստուար մասը Երևանի թեմումն է և պէտք է խոստովանել, որ ամենափառաւոր յոբելեանական հանդէսներ հէնց տեղի ունեցան այդ թեմում։

Թեմի կենտրոնական քաղաքը՝ Երևանը, աւելի քան պատուով դուրս եկաւ ազգային այդ մեծ տօնից. երկու օր, հոկտեմբերի 12-ին և 13-ին կազմակերպելով ազգային վերին աստիճանի փառաւոր և շքեղ հանդէսներ։ Ինչպէս ամենուրեք, Երևանում ևս կազմակերպուած էր յատուկ յանձնաժողով փոխ-թեմական նախագահութեամբ, որոնց գործունէութիւնը, պէտք է ասել, որ բաւական արդիւնաւոր է եղել։ Հոկտեմբերի 12-ին ս. Սարգիս եկեղեցում պատարագ է մատուցուել, որին ներկայ էին եղել ահագին բազմութիւն, հայ աշակերտութիւնը, ազգային հիմնարկութիւնների ներկայացուցիչները։ Պատարագից յետոյ եկեղեցու բակում ամբողջ հայ հոգևորականութիւնը՝ գլուխ ունենալով առաջնորդին՝ հոգեհանգիստ է կատարել ազգային Մեծ Տօնի երկու հերոսների ս. Սահակի և Մեսրոպի յիշատակին։ Երեկոյեան եկեղեցու գաւթում հրաւառութիւն է եղել և նուագել էր զինուորական երաժշտական խումբը։

Յաջորդ օրը, ամսիս 13-ին, տեղի է ունացել տօնի ամենաէական և ուշագրաւ մասը։ Առաւօտեան ժամը 9-ից ս. Սարգիս եկեղեցու գաւթում հաւաքուած թեմական դպրոցի ամբողջ աշակերտութիւնը, ուսուցչութիւնը և հոգաբարձութիւնը, համքարները՝ իրենց դրօշակներնով, հանդիսաւոր շքերթ են կատարել

երաժշտական խմբով քաղաքի գլխաւոր փողոցով դէպի Գայեանեան, Թրիմեան և Մարիամեան դպրոցները, որոնք համազգային մեծ տօնի պատճառով շատ փառաւոր կերպով զարդարուած են եղել թարմ ճիւղերով, ծաղիկներով և օրուայ հերոս ու հայութեան բարերար Մեծ Ուսուցիչների պատկերներով և ճիւղերից հիւսուած 412 և 1512 թուականներով։ Իւրաքանչիւր դպրոց այցելող թափօրին դիմաւորել է երգով, ոտանաւոր արտասանելով և ապա միանալով նրա հետ, շարունակել է շքերթը։ Ս. Լուսաւորիչ եկեղեցուց, որտեղ թեմականը պատարագ է մատուցել ու զգացուած քարոզ խօսել օրուայ նշանակութեան և ժողովրդի կատարելիք դերի մասին՝ յաւերժացնելու մեծ տօնը մի լուրջ ձեռնարկութեամբ, թափօրը աւելի մեծ շուքով և ժողովրդի հոծ բազմութեամբ, գլուխ ունենալով զգեստաւորուած փոխ-թեմականին, ուղևորուել է ս. Սարգիս և այնտեղ բակում կատարել գրական-երաժշտական ցերեկոյթ։ Տեղի են ունեցել ճառեր, արտասանուել են ոտանաւորներ, քառաձայն խումբը երգեր է երգել, նուագել են աշակերտներից կազմած և զինուորական երաժշտախմբերը։ Յատկապէս այդ օրուայ յիշատակին վաճառուելիս են եղել Յորելեանական Յանձնաժողովի պատուիրած արծաթէ նշանները, որ ներկայացնում էր քնար, մէջը բաց գիրք և թուականներ։

Պակաս փառաւոր չեն կատարուել Ազգային Մեծ Յոբելեանի հանդէսները հայաշատ Ալէքսանդրապոլում։ Այստեղ ևս տօնակատարութիւնը տուել է երկու օր։ Առաջին օրը, հոկտեմբերի 12-ին բազմաթիւ ժողովուրդ, դպրոցների աշակերտութիւնը հաւաքուել է ս. Փրկիչ եկեղեցին. այնտեղ պատարագից յետոյ հոգեհանգիստ է կատարուել ս. Սահակի և Մեսրոպի յիշատակին, քահանաներից մէկը մեծ երախտաւորների յիշատակին քարոզ է խօսել, որից յետոյ ամբոխը ուղևորուել է դէպի ժողովրդական տուն, խանութները փակ են եղել. այնտեղ տեղի է ունեցել գրական առաւօտ աշակերտութեան համար։

Հոկտեմբերի 13-ին, կիւրակի օրը առաւօտեան 10 ժամից սկսած հայ ժողովրդի ներկայացուցիչներին այցելում և հայ ժողովրդի մեծ տօնը շնորհաւորում էին ինչպէս օտարազգի, նոյնպէս և հայ այցելուներ և հիւրասիրուում թէյով, որից յետոյ սկսել է աշակերտութեան և ժողովրդի հանդիսաւոր երթը զինուորական երաժշտութեան նուագածութեամբ ու համքարական դրօշակներով զանազան փողոցներով. ճանապարհին ամենուրեք նրանց հետ միացել են քաղաքային, հայոց, կաթոլիկաց և առևտրական դըպրոցի աշակերտները։ Շքերթը կանգ է առել ս. Աստուածածնի եկեղեցու դուռը. այս եկեղեցում պատարագ է մատուցել և կայ-

սերական մաղթանք տեղի ունեցել, որից յետոյ հոգևորականների դասը գլուխ անցնելով ժողովրդական թափօրի՝ ուղևորուել են ս. Փրկիչ, որի բագում կատարուել է հայրապետական մաղթանք և տօնի առթիւ քահանաներից մէկը քարոզ է տալիս։ Թափօրն այստեղից մեկնել է Ժողովրդական Տուն, ուր ժողովրդի համար տեղի է ունեցել գրական-երաժշտական ցերեկոյթ։ Նոյն օրը երեկոյեան յաջորդարանի շուրջը ժողովրդական զբօսանք է կատարուել, նուագակցութեամբ սաղանդարների և զինուորական երաժշտախմբի, իսկ երեկոյեան ժամը 8-ից Ժողովրդական Տանը ներկայացուել է «Սամուէլ» պատմական պիէսը ու ցոյց տուել տաների գիւտի և օրուայ հերոսների վերաբերեալ՝ կենդանի պատկերներ։

—

Նոր-Բայազէտում տեղի ունեցած յոբելեանական հանդէսը, ճշմարիտ է, նախորդ քաղաքների նման այնքան հարուստ, բովանդակալից և փառաւոր չի կատարուել, սակայն այնտեղ ևս ինչպէս հոկտ. 12-ին, նոյնպէս և 13 ին թէ եկեղեցում և դպրոցի բագում, բացի եկեղեցական ծիսակատարութիւնից՝ պատարագից, հոգեհանգիստներից, ճառեր են արտասանել Մեծ Տօնի նշանակութեան մասին, անմահ հերոսների յիշատակին. աշակերտները՝ ոտանաւորներ են արտասանել, խմբական երգեր երգել և հանդիսաւոր թափօր կատարել եկեղեցուց դպրոց։

—

Կարս.—Այստեղ, ինչպէս ասում են, անշուք է անցել համազգային մեծ տօնի հանդէսը. կիւրակի օրը պատարագին հաւաքել էր բաւական բազմութիւն, ներկայ էին նահանգապետը, դիւիզիայի հրամանատար Յարութիւնեանը, ոստիկանապետը և շատ պաշտօնատար անձինք։ Պատարագից յետոյ եկեղեցական թափօրը հանդիսաւոր կերպով եկել է ծխական դպրոցի բակում մաղթանք կատարել։ Դպրոցի աւագ ուսուցիչը ռուսերէն լեզուով մի համառօտ բանախօսութիւն է արել օրուայ նշանակութեան մասին։ Նահանգապետը մի քանի խօսքով բացատրել է տօնի մեծ նշանակութիւնը հայ ժողովրդի համար, ներողութիւն խնդրելով, որ հանդիսի մնացած մասը իրեն անհասկանալի կը լինի, հեռացել է իր պաշտօնեաներով ժողովուրդի ուռաների և ծափահարութեան տակ։ Այնուհետև բանախօսութիւններ և խմբական երգեցողութիւններ են տեղի ունեցել, ոտանաւորներ արտասանուել ու այդպիսով հանդէսը վերջացել է։

Բաթում.—Համազգային տոնին այստեղ նախ հայոց եկեղեցում պատարագ է մատուցել, ժաղթանք կատարել և քարոզ խօսել։ Ներկայ են եղել նահանգապետն և այլ պաշտօնատար անձինք, քաղաքագլուխը, հայոց դպրոցի աշակերտութիւնը և այլ դպրոցների հայ աշակերտութիւնն իրենց դաստիարակների հետ միասին և ժողովրդի մեծ բազմութիւն։ Բոլորը միասին եկեղեցուց ուղևորուել են Շմաւկու թատրոնը։ Տեղի են ունեցել բանախօսութիւններ. մէկը ռուսերէն լեզուով՝ այլազգիներին ծանօթացրել է օրւայ մեծ նշանակութիւնը հայ ժողովրդի համար։ Քաղաքագլուխ իշխ. Անդրոնիկովը շնորհաւորել է քաղաքային ինքնավարութեան կողմից հայութեան ամենամեծ կուլտուրական տօնը։ Խօսել է նաև Վրաց Մէջ Գրագիտութիւն Տարածող Բաթումի ճիւղի վարչութեան կողմից Մղիւանին։ Վերջը խօսել է հոգաբարձութեան նախագահ Ա. Մնդոյեանը սա ցանկութիւն է յայտնել, որ նման կուլտուրական տօները ոգևորեն մեզ և մայրենի լեզուի ամրապնդման նեցուկ հանդիսանան։ Վերջը հրաւիրել է Բաթումի հասարակութեան ուշադրութիւնը առաջիկայում տօնուելիք հայոց դպրոցի 25-ամեայ յոբելեանի վրայ։ Ամբողջ ժամանակը երգում էր դպրոցի խումբը։

—

Վլադիկաւկազ.—Առանձին հանդիսաւորութեամբ և չտեսնուած ոգևորութեամբ է կատարել համազգային մեծ տօնը այստեղ։ Ժողովրդի հետաքրքրութիւնը անչափ է եղել։ Շաբաթ օրը ծխ. դպրոցի և այլ դպրոցների հայ աշակերտների, բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ կատարել է հոգեհանգիստ հայ գիրը և հայ տպագրութիւնն ստեղծողների յիշատակին։ Ուսուցիչներից մէկը խօսել է օրւայ տօնի նշանակութեան մասին։ Գիմնազիայի աշակերտներից մէկը ռուսերէն լեզուով կարդացել է երկու տօների նշանակութեան մասին։ Հետևեալ օրը եկեղեցում մաղթանք է կատարել. խօսել է Սարիկեան քահանան։ Պատարագից յետոյ, հանդիսաւոր թափօրով ամբողջ ժողովուրդը ուղևորուել է դպրոց. ամպհովանու տակ բռնած դպրոց է տարուել ս. Մեսրոպի մեծադիր պատկերը։ Դպրոցի ճակատը և բակը հիանալի կերպով զարդարուած է եղել կանաչով, դրօշակներով։ Դպրոցի ներսն ևս շատ փառաւոր զարդարուած է եղել դրօշակներով, ծաղկատառերով, թափանցիկ մակագրութիւններով։ Ուշադրութեան արժանի է եղել այն սրահը, որի պատերը զարդարուած են եղել հայ գործիչների պատկերներով. տեղի է ունեցել մի համեստ ցուցահանդէս. ցուցադրուած են եղել հայ ժամու-

լը, հին ձեռագրեր, հայ պատմութեան և հայագիտութեան վերաբերեալ գրքեր և յոբելեանական հրատարակութիւններ։

Մի այլ սենեակում շինուած են եղել արևելեան և այլ քիոսկներ, որտեղ զգեստաւորուած մշեցի, դարաբաղցի և ախալցխացի հայուհիները վաճառելիս են եղել սրբերի պատկերներ, յոբելեանական ցիկներ, ծրագիրներ և գրքեր։ Բանախօսել է աւ. ուս. Դուրգարեան։ Վերջը ցոյց է տուել կենդանի պատկերներ՝ «Ճառերի գիւտը» և «Սահակ Մեսրոպեան դպրոց»։ Հրաւիրուած են եղել օտարազգիներ։ Քաղաքագլուխ Բաևը ողջոյնի ճառ է արտասանել։ Տպաւորութիւնը այս ճոխ հանդիսի շատ գոհացուցիչ, նոյնիսկ մեծ է եղել հայ հասարակութեան վրայ։

—

Ախալքալակ.—Հանդէսները երկու օր են տևել և բաւական շքեղ. հոկտեմբերի 12-ի առաւօտեան պաշտօնական անձինք, հիմնարկութիւնների ներկայացուցիչներ, ժողովուրդը հաւաքուած են եղել համքարական դրօշակներով եկեղեցու բակը։ Ներկայ էին և աշակերտութիւնը. պատարագից յետոյ օծուել են ս. Սահակի և Մեսրոպի ձիթանկարեայ պատկերները, յետոյ կատարուել է հոգեհանգիստ, խօսել է քահանաներից մէկը, որից յետոյ հանդիսաւոր շքերթը ուղևորուել է դպրոցի նոր շէնքը, որտեղ ճառեր են արտասանուել, որից յետոյ հացկերոյթ է տեղի ունեցել մօտ հարիւր անձի մասնակցութեամբ։ Բացակայելիս է եղել ուսուցչական կազմը։ Նուագել են սաղանդարներ և զուռնաներ։ Հետևեալ օրը պատարագից յետոյ հայրապետական ժաղթանք է կատարուել և բանախօսութիւններ են տեղի ունեցել, երգուել խմբական երգեր և արտասանուել ոտանաւորներ։ Երեկոյեան յոբելեանական ներկայացում է տուել. խաղացել են «Ալմէն և Ֆարման» և ս. Սահակի ու ս. Մեսրոպի կեանքից յոբելեանի առթիւ գրած «Լոյսի ծագումը» պիէսները։

—

Սուլտա.—(Ախալքալաքի գաւ.)—Այստեղ ինչպէս հոկտեմբերի 12-ին, նոյնպէս 13-ին շքեղ հանդէսով տօնուում է տառերի գիւտի և տպագրութեան յոբելեանը։ Բացի սովորական բանախօսութիւններից, գրական-երաժշտական ցերեկոյթից, բուն տօնի օրը նուագելիս են եղել զուռնայի, մէջիլների և պարկապզուկների խմբերը։ Հանգանակիչ յանձնաժողովը տնից տուն, դպրոցական ֆոնդի օգտին նուէրներ է հաւաքել։

—

Սաթխա (Ախալքալ. գաւ.)—Այստեղ ևս տօնուել է մեծ տօնը ժողովրդի խուռն բազմութեան ներկայութեամբ։ Շաբաթ օրը պատարագի ժամանակ բանախօսութիւններ են արտասանուել, հայրապետական մաղթանք հոգեհանգիստ կատարուել բազմերախտ վաստակաւորների յիշատակին։ Կիւրակի օրը, հոկտ. 13-ին, հանդէս և ֆոնդի օգտին հանգանակութիւն եղաւ։

—

Շուշի.—Շաբաթ օրը Ագուլեաց մայր եկեղեցում, ներկայութեամբ պաշտօնատար անձանց, հայ դպրոցների աշակերտութեան և բազմաթիւ հասարակութեան հանդիսաւոր պատարագ է մատուցուել։ Քահանաներից մէկը խօսել է գրերի գիւտի և տպագրութեան նշանակութեան մասին. ապա թեմական դպրոցում տեղի է ունեցել աշակերտական հանդէս, որտեղ խօսել է ուսուցիչներից մէկը, երգել է դպրանոցի քառաձայն խումբը ու արտասանել են ուսանաւորներ։

Հոկտեմբերի 13-ին, կիւրակի օրը հանդէսը նուիրուած է եղել ժողովրդի համար։ Պատարագից յետոյ, որ տեղի է ունեցել Ղազանչեցոց եկեղեցում, ժողովուրդը հաւաքուել է դպրոցում, որ բառականին զարդարուած է եղել։ Այս անգամ ևս բանախօսութիւն է տեղի ունեցել։

—

Գանձակ.—Աւելի քան համեստ բնաւորութիւն է կրել տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի տօնակատարութիւնն այստեղ։ Հոկտեմբերի 12-ին ս. Յովհաննէս աւագ եկեղեցում պատարագ է եղել, խօսել է մի քահանայ և ուրիշ ոչինչ։ Հետևեալ օրը նոյն եկեղեցում դարձեալ պատարագ է մատուցել և ապա թափօրով գիմել են Լուսաւորիչ եկեղեցին, այնտեղ մաղթանք կատարել։ Մի ուրիշ քահանայ էլ այստեղ է ըստ պատշաճի քարոզ խօսել, որից յետոյ ժողովրդի մի մասը ցրուել է մեայն մի փոքր մասը հաւաքուել է տօնի համար զարդարուած Լուսաւորչի դպրոցի դահլիճը։ Ծակայն այստեղ միայն արտասանուել է մի բանախօսութիւն և համարեա ուրիշ ոչինչ։ Այլազգիներից ոչոք չէ հրաւիրուած եղել։

—

Վաղարշաւան.—Ռուսաստանի հեռաւոր հայ գաղութներից մէկում, Վաղարշապատում առևտրական ակումբի սրահում հայ ուսանողների նախաձեռնութեամբ կատարուել է բաւական համեստ կերպով հայ գրերի 1500-ամեակը և տպագրութեան 400-ամեակը։ Զուտ հայկական յոբելեանական հանդէսը բաց է արել ուսանող-

ներից մէկը, ծանօթացնելով ունկնդիրներին օրուայ մեծ տօնի նշանակութեան հետ։ Այնուհետև ուսանողները հատընտիր ոտանաւորներ են արտասանում, երգում խմբական երգեր և նագում խմբով թառերի և քամանչի վրայ։ Վերջը հայկական պարեր են տեղի ունենում։ Ուսանողների վրացի ընկերները շնորհաւորական հեռագիր են տուել։

—

Ինչպէս տեսնում ենք համարեա ամենուրեք հետևում են մի որոշ ծրագրի, երբեմն նայած տեղական յարմարութեան, կրճատում կամ յաւելում են անում, մի փոքր աւելի շքեղ կամ համեստ են կատարում։ Ընդհանրապէս նկատելի է, որ նախ ամենուրեք հանդիսաւոր պատարագ է մատուցւել, շատ տեղեր ժողովրդի խուռն բազմութեան, պաշտօնատար անձանց, հայոց դպրոցների և պետական դպրոցների հայ աշակերտութեան ներկայութեամբ, ապա հայրապետական մաղթանք է տեղի ունեցել ի յիշատակ հայ ժողովրդի մեծ բարերարների՝ ս. Սահակի և Մեսրոպի, որից յետոյ շատ անգամ հանդիսաւոր թափօրով բոլորը գնացել են գլխաւորապէս դպրոց, այնտեղ կատարելու հանդիսի, եթէ կարելի է այսպէս ասել, աշխարհիկ մասը։ Մի քանի վայրերում մանկական հանդէսներն առանձին են կատարուել, հասակաւորներինը առանձին։ Շատ տեղերում մանկական և այլ ներկայացումներ են եղել, կենդանի պատկերներ ցոյց տուել, հայկական պարեր եղել և դպրոցական կամ գրական ֆոնդերի օգտին գումարներ հանգանակուել, նոյն իսկ բանկետներ տեղի ունեցել։

Ահա այս կերպ կամ մի փոքր աւելի կամ պակաս չափով մի կամ երկու օր տեղութեամբ հանդէսներ են կատարուել զանազան վայրերում։

—

Եկատերինոդարում, բանախօսներից մէկը ցաւ է յայտնել հասարակութեան անտարբեր վերաբերմունքի առիթով, որին իբրև ապացոյց ծառայել կարող է տեղական հայ հասարակական հիմնարկութիւնների անմխիթար կացութիւնը։

—

Քութայիսում, համեմատաբար շատ համեստ և անշուք է կատարուել տօնակատարութիւնը։

—

Վերին Ազուլիսում, պատմական Գողթան գաւառի այժմեան կենտրոնում, ուր գործունէութեան ասպարէզ էր ընտրել ս. Մեսրոպը, չէր կարող այնպէս փառաւոր չը կատարուել յիշատակելի

յոբելեանը։ Ինչպէս անցեալ հոկտեմբերին յոբելեանական տարեայ բացմանը, նոյնպէս և այս հոկտեմբերին փակմանը հանդիսաւոր կատարուել է տօնը. յատուկ պատգամաւոր է ուղարկուած Էջմիածին և յօգուտ դպրոցական ֆոնդի մի խոշոր գումար է հանգանակուած։

—

Նուխիում.—Այստեղ շաբաթ օրը տեղի է ունեցել աշակերտական-դրական երաժշտական ցերեկոյթ, իսկ կիւրակի օրը կազմակերպուած է եղել ձրի դրական-երաժշտական երեկոյթ և երեկոյեան ներկայացում։

—

Ղուբայում տեղի է ունեցել մի համեստ ցերեկոյթ։

—

Կրասնավոդսկում. հոկտեմբերի 12-ին սովորական պատարագից յետոյ դպրոցում տեղի է ունենում աշակերտական ցերեկոյթ, իսկ կիւրակի օրը դարձեալ հանդէս հասակաւորների համար դպրոցի դահլիճը զարդարուած։ Երեկոյեան յօգուտ դպրոցի ներկայացում է եղել։

—

Մայկոպում տաւերի գիւտի և տպագրութեան տօնակատարութիւնը մի օր է տևել, սակայն բազմաբովանդակ է եղել։ Աշակերտական հանդէս, ներկայացում մանկական պիէսայի, երեկոյեան հասարակական ակմբանոցում հանդիսաւոր երեկոյթ՝ երեք մասից բաղկացած. ա. մասը բաղկացած է եղել ռուսերէն երկու սօլօ երգերից, մի մելոդեկլամայից և ռուսերէն լեզուով բանախօսութիւնից. բ. մասը՝ հայերէն խմբական երգերից, երաժշտութիւնից և ընթերցանութիւնից, գ. մասը՝ եւրոպական պարերից։ Երեկոյթը բաւական արդիւնք է ունեցել։

—

Մ. Ղարաքիլիսայում տօնական հանդէսը կատարել է միայն կիւրակի օրը եկեղեցում և դպրոցի յատկապէս զարդարուած դահլիճում. կոչ է եղել հասարակութեանը իրենց լուման հասցնել կազմակերպուելիք դպրոցական ֆոնդին։

—

Շուլաւերում հոկտեմբերի 12-ի առաւօտեան դրական-երաժշտական հանդէս է եղել աշակերտների համար և ապա պատարագ, մաղթանք և հոգեհանգիստ։ Հոկտեմբերի 13-ին եղել է նոյն հանդէսը. ժողովուրդը պատարագից յետոյ հաւաքուել է դպրոց, ուր տեղի է ունեցել դրական-երաժշտական ցերեկոյթ,

գլխաւորապէս հասակաւորների համար։ Առաջարկուել է դպրոցական նոր շէնք կառուցանել։

Կատարուել են աւելի կամ պակաս չափով հանդէսներ՝ Հին-Նախիջեւանում, Արդվինում, Բորժոմում, Սուրամում, Ղաթարում, Մեղրիում, Ղզլարւաղում, Հնչեստում (Բեսարաբ. Ն.), Բուրջում (Սուխում. շրջ.), Խոջաբէկում, Հայ-Գեարգեառում, Տաշքենդում, Օքրոքակերտում (Արդուինի վիճ.), Կաքաւաբերդում։ Վերջանում, որ համարւում է հայկական խուլ անկիւններից մէկը, հանդէսը ուշագրաւ է եղել թէ իր ճոխութեամբ և թէ խորհրդակցութեան ժամանակ ընդունուած բանաձեւերով։ Այդ օրը օրհնուել է Կաքաւաբերդի նորակառոյց դպրոցը և խորհրդակցութիւնն ընդունել է նախ՝ տարրական ուսումը շրջանում պարտադիր դարձնել և ապա՝ դպրոցն անուանել Սահակ Մեսրոպեան։ Այս առաջարկների հետ միասին ընդունել են մի շարք բարեփոխութիւններ յատկապէս դպրոցի վերաբերմամբ։ Ուսուցչական կազմը յանձն է առել դասախօսութիւնների միջոցով հասկանալի դարձնել ժողովրդի համար պարտադիր ուսման անհրաժեշտութիւնն ու նշանակութիւնը։ Բանանցում, Լագոդաղում, Գորիսում եւս տօնել են երկու մեծ յոբելեանները։ Գորիսում հանդէսն աչքի է ընկել յատկապէս տօնի համար պատրաստուած գեղեցիկ դրօշակներով, որոնց վրայ գրուած են եղել «1500», «400» և հայ ձայնաւոր տառերը, նշանակուած են եղել նաև մի շարք յայտնի գրական անուններ։ Աշակերտութեան գրքեր և միրգ են բաժանած, իսկ հասակաւորները հացկերոյթ են ունեցել։

—

Դերբենտում ի շարս այլ բաժինների, աշակերտները խաղացել են «Գաղտնիք» երկու գործող. պիէսը և տուել են կենդանի պատկերներ։ Գորիսում ինչպէս և Սաչխերում քահանաները ստիպուած են եղել վրացերէն լեզուով բացատրել ժողովրդին Մեծ Տօնի նշանակութիւնը, մանաւանդ որ վերջինի հանդիսին ներկայ են եղել նաև վրացուհիներ։ Ղզլարում աշակերտական հանդէսին ներկայացուել է «Դասարանում» պիէսը և հայկական պարեր. տեղի ունեցել, իսկ երեկոյեան ս. Մեսրոպի և այլ պատշաճ պատկերներով, դրօշակներով, ծաղիկներով զարդարուած դահլիճում ուսուցիչ դերակատարները հասարակութեան համար ներկայացրել են տառերի գիւտի վերաբերեալ մի քանի պատկերներ։

Գ. Դ.